

ՈՐՈՇՈՒՄ

25.09.2018թ.

Արձանագրություն թիվ 2

1. ՀԱԱՀ Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի և Գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի ֆակուլտետների ամբիոնների միավորման հարցի վերաբերյալ.

1.1. Առաջարկել ՀԱԱՀ գիտխորհրդին Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի կազմում ձևավորել ստորև առաջարկվող ամբիոնները և դիմել ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդին՝ հաստատելու գիտխորհրդի որոշումը:

- Բարձրագույն մաթեմատիկայի և տեսական մեխանիկայի ամբիոն,
- Ավտոտրակտորների և գուղատնտեսական մեքենաների ամբիոն՝ միավորելով Ավտոմոբիլներ և տրակտորներ, Գյուղատնտեսական մեքենաներ ամբիոնները:
- Գյուղատնտեսության ավտոմատացման և տեխնիկայի շահագործման ամբիոն՝ միավորելով Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման, Գյուղատնտեսության մեքենաշինության տեխնոլոգիայի և նորոգման և Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման և ավտոմատացման ամբիոնները:
- Կենսագործունեության անվտանգության ամբիոն:
- Մեքենագիտության և գրաֆիկայի ամբիոն՝ միավորելով Գրաֆիկայի և մեքենաների նախագծման հիմունքների և Նյութերի դիմադրության և ճարտարագիտական կառուցվածքների ամբիոնները,
- Հիդրոտեխնիկական կառուցվածքների և մելիորացիայի ամբիոնը անվանափոխել Ջրային ռեսուրսների կառավարման ամբիոն,
- Հողաշինարարության և հողային կադաստրի ամբիոն:

2. Ակադեմիական պարտքերի հանձնման ընթացքի և ուսման վարձավճարների վճարման վերաբերյալ.

2.1. Ակադեմիական պարտքերի հանձնման վերջնաժամկետ սահմանել ս.թ. սեպտեմբերի 28-ը:

2.2. Առաջին կուրսեցիների վարձավճարների վճարման ժամկետը երկարաձգել և վերջնաժամկետ սահմանել ս.թ. հոկտեմբերի 5-ը: Նշված ժամկետում ուսանողները պետք է վճարեն առաջին կիսամյակի վարձավճարի առնվազն 30%-ը և ստորագրեն

պարտավորագիր՝ մինչև քննաշրջանի սկիզբը վարձավճարի պարտքն ամբողջովին մարելու վերաբերյալ: Ուսման վարձավճարի սահմանված կարգը խախտող ուսանողները կհեռացվեն համալսարանից:

2.3. 2-5 կուրսերի ուսանողների վարձավճարների վճարման ժամկետը երկարաձգել և վերջնաժամկետ սահմանել *ս.թ. հոկտեմբերի 5-ը* և նույն ժամկետում կատարել կուրսից-կուրս ուսանողների փոխադրման հրամանագրում:

2.4. ՀԱԱՀ տարբեր ֆակուլտետների դասերին չհաճախած, տարբեր առարկաներից ակադեմիական պարտքեր ունեցող և այդ պարտքերը մինչև *ս.թ. սեպտեմբերի 28-ը* չվերահանձնած, նույն առարկայից երեք անբավարար գնահատական ստացած, ուսման վարձը մինչև *ս.թ. հոկտեմբերի 5-ը* չվճարած ուսանողների հարցերը քննարկել սահմանված կարգի համաձայն և կայացնել համապատասխան որոշումներ:

2.5. Ուսման վարձավճարների վճարման կարգի վերաբերյալ առաջացող հարցերը քննարկել գլխավոր հաշվապահի հետ:

2.6. 2018-2019թթ ուս. տարվա գարնանային կիսամյակից սկսած հրաժարվել վճարման երկակի ստանդարտներ կիրառելուց, և ողջ գործընթացը կամակերպել համապատասխան կարգերի համաձայն:

2.7. Հեռակա ուսուցման համակարգում ակադեմիական պարտքերի հանձնման վերջնաժամկետ սահմանել *ս.թ. դեկտեմբերի 30-ը*, այնուհետև ուսման վարձավճարի կամ ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողների հեռացման հարցը քննարկել և գործընթացը կազմակերպել ըստ սահմանված կարգի:

2.8. Ագրարային մենեջմենթ մագիստրոսական ծրագրի ուսման վարձավճարների փոխհատուցման շրջափոխման գործընթացն իրականացնել մինչև *ս.թ. հոկտեմբերի 15-ը*:

### **3. Համալսարանում Moodle և Mulberry համակարգերի ներդրման գործընթացի վերաբերյալ.**

3.1. Հանձնարարել դեկաններին և ամբիոնի վարիչներին սեղմ ժամկետներում SS և ԻՕ կենտրոն ներկայացնել դասախոսական անձնակազմի էլեկտրոնային հասցեները:

3.2. Հանձնարարել դեկաններին մինչև *ս.թ. սեպտեմբերի 28-ը* SS և ԻՕ կենտրոն ներկայացնել ուսանողների ցուցակներն ըստ կուրսերի՝ էլեկտրոնային հասցեները գրանցելու համար:

3.3. Հանձնարարել SS և ԻՕ կենտրոնին, մինչև *ս.թ. հոկտեմբերի 10-ը*, ավարտել ուսանողների գրանցման գործընթացը Moodle համակարգում:

3.4. Հանձնարարել ամբիոնի վարիչներին սահմանված ժամկետներում Moodle համակարգ ներբեռնել դասախոսությունների բոլոր նյութերը:

3.5. Մինչև ս.թ. հոկտեմբերի 20-ը ավարտել Mulberry համակարգի ձևավորման աշխատանքները և սկսել ուսուցողական դասընթացները:

3.6. ՀԱԱՀ-ում Moodle և Mulberry համակարգերի ներդրումից հետո համակարգերը ներդնել նաև բոլոր մասնաճյուղերում, քոլեջներում:

**4. ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2018թ-ի սեպտեմբերի 18-ի թիվ 01/06.2/13171-18 հրամանի վերաբերյալ**

ՀԱԱՀ ներքոհիշյալ ուսանողներին սահմանված կարգով հրամանագրել՝ անվճար համակարգում ուսումնառությունը շարունակելու համար.

N	Անուն ազգանուն	Մասնագիտությունը	Քննության միավորը	Ատեստատի միավորը
1	Նուրիջանյան Արման Նահապետի	Ագրոէկոլոգիա	40	17
2	Հակոբյան Աստղիկ Արտակի	Անասնաբուժություն	40	5
3	Խաչատրյան Սիրուն Խաչիկի	Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն	40	-
4	Մանուկյան Անահիտ Համլետի	Գյուղատնտեսական հումքի, պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում	40	-

**5. ՀԱԱՀ Ոսկեհատի ուսումնափորձական տնտեսության գինեգործության ուսումնաարտադրական կենտրոնի շահագործման ավարտական աշխատանքների իրականացման վերաբերյալ.**

5.1. Ձևակերպել Ոսկեհատի ուսումնափորձական տնտեսության գինեգործության ուսումնաարտադրական կենտրոնի շահագործման ակտը, իսկ որպես նյութական պատասխանատու նշանակել Վ. Մելքոնյանին:

**6. Համալսարանի շահեկիցների կրթական կարիքների բացահայտման նպատակով իրականացվող հարցումների վերաբերյալ.**

6.1. Իրականացնել շարունակական հարցումներ՝ համալսարանի շահեկիցների կրթական կարիքների բացահայտման նպատակով:

6.2. <<Դասախոսը՝ ուսանողի աչքերով>> հարցման իրականացման նպատակով օգտագործել ԱՌԻԿ-ի հարցաշարերի ցուցիչները և հարցումն իրականացնել քննաշրջանից 1-2 օր առաջ:

**7. Ա. Քոչինյանի անվան քոլեջից ցերեկային ուսուցման բակալավրիատ փոխադրված ուսանող Արտակ Այվազյանի՝ բանակից վերադարձից հետո, համալսարանում վերականգնվելու խնդիրների վերաբերյալ.**

7.1. Ա.Ռ. Այվազյանին <<Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում ու կառավարում>> բակալավրիական մասնագիտական կուրսում վերականգնվելու հնարավորությունները քննարկել ՀՀ ԿԳ նախարարության և իրավաբանի հետ, այնուհետև կայացնել համապատասխան որոշում:

**8. Դասընթացներին ուսանողների հաճախումների վերաբերյալ դեկանատների կողմից տվյալների ձեռքբերման անհրաժեշտության վերաբերյալ.**

8.1. Յուրաքանչյուր ամսվա ավարտին իրականացնել դասընթացներին ուսանողների հաճախումների հաշվառումներ՝ տեղեկագրերի միջոցով:

**9. Դասընթացներին ուսանողների բացակայությունների միասնական շեմի սահմանման անհրաժեշտության վերաբերյալ.**

9.1. Հանձնարարել դեկաններին լրացուցիչ քննարկել ուսանողների բացակայությունների միասնական շեմ սահմանելու հարցը և ներկայացնել առաջարկություններ:

**10. Համալսարանում ուսանողների հետ կապի, տեղեկատվության հոսքի խնդիրների, ինչպես նաև թափուր հաստիքների համակարգման գործընթացի վերաբերյալ.**

10.1. Օգտագործել Moodle համակարգի հնարավորությունները՝ ուսանողների հետ արագ կապն ապահովելու և անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը ուսանողներին հասանելի դարձնելու նպատակով:

10.2. Հանձնարարել դեկաններին, ամբիոնների վարիչներին, ստորաբաժանումների ղեկավարներին, թափուր հաստիքների լրացման նպատակով նախապես կատարել պահանջարկի գնահատում, և տվյալները ներկայացնել կարիերայի կենտրոն:

10.3. Հանձնարարել կադրերի բաժնին՝ համալսարանի թափուր հաստիքների համակարգումն ու մրցույթների անցկացումն իրականացնել կարիերայի կենտրոնի միջոցով:

11. Աշխատանքային կարգապահության վերաբերյալ.

11.1. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ իրականացնել խիստ վերահսկողություն և, մինչև վերահսկման էլեկտրոնային համակարգի ներդրումը, աշխատաժամանակը սահմանել 8:45-ից մինչև 17:15-ը՝ կես ժամ ընդմիջումով: Լրիվ (1.0) դրույքով աշխատող դասախոսական անձնակազմի աշխատաժամանակը սահմանել 8:45-ից մինչև 16:25:

11.2. Հանձնարարել Վ. Մելքոնյանին արագ ձեռք բերել հսկողության տեսախցիկներ, իսկ մինչ այդ՝ համալսարանում ավելացնել ծխախոտի դեմ խիստ պայքար ծավալելու վերաբերյալ համապատասխան տեղեկատվական, ուսուցողական նյութերը, ցուցապաստառները:

11.3. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ ծխախոտի դեմ պայքար ծավալելու նպատակով համալսարանում խստացնել դասախոսների հերթապահությունները՝ մինչև հսկողության տեսախցիկների տեղադրումը, որից հետո կարգազանցները խստորեն կպատժվեն:

12. Ազրոնումիական ֆակուլտետի տարբեր կուրսերում պրակտիկայի անցկացման ընթացքի վերաբերյալ.

12.1. Հանձնարարել ղեկաններին մշակել ուղեցույցներ պրակտիկային մասնակցության համար անհրաժեշտ կարգի ու պարագաների վերաբերյալ և պրակտիկայի մեկնելուց առաջ ուսանողների հետ տանել բացատրական աշխատանքներ:

ՌԵԿՏՈՐՄՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝



Վ. ՈւՌՈւՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Գ. ԱՎԱԳՅԱՆ